Կարգապահական գործ թիվ ԿԳ-16048

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի մարտի 03-ի թիվ 36-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/30-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի, Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լիլիթ Սարգսյանին (արտոնագիր թիվ 1885) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.02.2016թ-ին Պալատի նախագահի առաջին տեղակալին ներկայացվել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Լիլիթ Սարգսյանը (արտոնագիր թիվ 1885) 2015թ. մարտից մինչև դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի առաջին տեղակալի 01.02.2016թ. թիվ 62-Ա/ԿԳ-16048 որոշմամբ փաստաբան Լիլիթ Սարգսյանի (արտոնագիր թիվ 1885) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16048):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի մարտի 03-ին ժամը 18:51-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Լիլիթ Սարգսյանը Պալատի խորհրդի նիստի ժամանակ հայտնել է, որ իր երեխան ծնվել է 07.01.2015թ. և իր կողմից 12.06.2015թ-ին դիմում է ներկայացվել ՀՀ փաստաբանների պալատ՝ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 13-րդ կետի «բ» ենթակետի համաձայն ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով անդամավճարների վճարումներից ազատվելու համար: Լիլիթ Սարգսյանը հայտնել է, որ դիմումը ներկայացնելուց հետո մեկնել է Հայաստանի Հանրապետությունից: Վերադառնալով Հայաստանի Հանրապետություն տեղեկացել է, որ իր կողմից ներկայացված դիմումը մերժվել է, և իր նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ 2015թ. մարտից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների անդամավճարը չվճարելու հիմքով: Նշել է նաև, որ մերժման որոշումը չի ստացել, և տեղյակ չի եղել, որ ինքը չի ազատվել անդամավճարների վճարումներից: Խնդրել է հարուցված կարգապահական վարույթը կարճել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Լիլիթ Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 02.03.2015թ-ին (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Լիլիթ Սարգսյանն ունի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մարտից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է ՀՀ փաստաբանների պալատի ֆինանսական ծառայության կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին 01.02.2016թ. տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Լիլիթ Սարգսյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքով),

4) փաստաբան Լիլիթ Սարգսյանը 12.06.2015թ. դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 13-րդ կետի «բ» ենթակետի համաձայն ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով անդամավճարների վճարումներից ազատվելու համար (հաստատվում 12.06.2015թ. դիմումի պատճենով)

5) փաստաբան Լիլիթ Սարգսյանի 12.06.2015թ. դիմումը՝ անդամավճարի վճարումից ազատելու վերաբերյալ մերժվել է (հաստատվում է 26.06.2015թ-ի գրության պատճենով)

6) Մերժման որոշումը Լիլիթ Սարգսյանը չի ստացել (հաստատվում է Լիլիթ Սարգսյանի բացատրություններով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.03.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Լիլիթ Սարգսյանի (արտոնագիր 1885, ստացել է՝ 02.03.2015թ.) նկատմամբ 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիլիթ Սարգսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճել, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների* ***պալատի սահմանած չափով և կարգով մուծում է*** *անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ *Պալատի* ***խորհուրդը սահմանում է փաստաբանի անդամավճարի*** *և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, ինչպես նաև փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների* ***չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը****.*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 7-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը*, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «*Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*»:

Կարգով նախատեսվում է նաև Պալատի նախագահի կամ Խորհրդի որոշումներով անդամավճարների վճարումներից լրիվ կամ մասնակի ազատման դեպքերը: Մասնավորապես, Կարգի 13-րդ կետի համաձայն՝ *Պալատի նախագահի որոշումներով անդամավճարների վճարումներից ազատվում են համապատասխան դիմումներ ներկայացրած հետևյալ փաստաբանները (ընդ որում, որոշումները ընդունվում են միայն անդամավճարների գծով պարտքի բացակայության դեպքում)՝ …. բ) փաստաբանները, մինչև ծննդաբերությունը երեք ամիս ժամանակով և ծննդաբերությունից հետո մեկ տարի*

ժամանակով՝ համապատասխան բժշկական փաստաթուղթ և երեխայի ծննդյան վկայականը ներկայացնելու դեպքում՝ լրիվ անդամավճարի մասով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ փաստաբանը պարտավոր է վճարել Խորհրդի կողմից սահմանված կարգով և չափով անդամավճար:

Փաստաբան Լիլիթ Սարգսյանի նկատմամբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է այն հիմքով, որ վերջինս՝ խախտելով Կարգի վերոնշյալ պահանջը, չի վճարել անդամավճար 2015թ. մարտից մինչև 2015թ. դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

Գործում առկա ապացույցներով, այդ թվում նաև փաստաբան Լիլիթ Սարգսյանի բացատրություններով հիմնավորվում է, որ վերջինս 12.06.2015թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատ Կարգի 13-րդ կետի «բ» ենթակետի համաձայն ծննդաբերությունից հետո մեկ տարի ժամանակով անդամավճարների վճարումներից ազատվելու համար: Հաշվի առնելով, որ դիմելու պահին փաստաբան Լիլիթ Սարգսյանն ունեցել է անդամավճարի գծով պարտք, նրա դիմումը Կարգի համաձայն մերժվել է, և նրա նկատմամբ դիմումում նշված ժամանակահատվածի, այդ թվում՝ 2015թ. մարտից մինչև դեկտեմբեր (ներառյալ) ամիսների համար, չի կիրառվել Կարգով նախատեսված արտոնությունը և այդ ժամանակահատվածի համար հաշվարկվել է անդամավճար: Կարգապահական գործով չի հաստատվել, որ մերժման որոշումը փաստաբան Լիլիթ Սարգսյանը ստացել է:

Հաշվի առնելով, որ անդամավճարի մուծման պարտավորությունը չկատարելու համար կարգապահական վարույթը հարուցվել է այն ժամանակահատվածի համար, որի վերաբերյալ փաստաբան Լիլիթ Սարգսյանը 12.06.2015թ. անդամավճարների վճարումից ազատվելու դիմում է ներկայացրել, ինչպես նաև այն հանգամանքը, որ իր դիմումը մերժելու վերաբերյալ որոշումը փաստաբան Լիլիթ Սարգսյանը չի ստացել, ուստի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիլիթ Սարգսյանը չէր կարող տեղյակ լինել, որ այդ ժամանակահատվածի համար հաշվարկվել է անդամավճար և վերջինիս կողմից չէր կարող կատարվել այդ ժամանակահատվածի համար անդամավճարի վճարման պարտականությունը:

Պալատի խորհուրդն արձանագրում է նաև, որ անդամավճարի գոյացած պարտքը ներելու արտոնություն կարգով նախատեսված չէ, և այդ հարցը կարող է լուծվել Պալատի ու Լիլիթ Սարգսյանի միջև կարգապահական վարույթից դուրս:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդկետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի, իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Լիլիթ Սարգսյանի (արտոնագիր թիվ 1885) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և

«Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. ենթակետի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լիլիթ Սարգսյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀփաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան